

Կարո Խաչմանյան
Հայ-Ռուսական համալսարանի Իրավագիտություն ֆակուլտետի մագիստրանտ,
«Կոնսիզլերի» փաստաբանական գրասենյակի իրավաբան
Էլ. հասցե՝ khachmanyan@bk.ru

ԹԵՐԱՊԵՎՏԻԿ (ԲՈՒԺԱԿԱՆ) ԿԼՈՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է թերապևտիկ (բուժական) կլոնավորման կիրառման խնդրահարույց հարցերին: Դրանում վերլուծության է ենթարկվում կլոնավորման հասկացությունը, տեսակները, նպատակը, թերապևտիկ կլոնավորման կիրառմանն ուղղված հեռանկարները, ինչպես նաև վեր են հանվում ոլորտում առկա խնդիրները, արվում են առաջարկներ վերջիններիս հստակեցման ուղղությամբ: Վերլուծությունների հիման վրա եզրակացություններ են արվում նաև օրենսդրական որոշ փոփոխություններին և լրացումներին ուղղված կլոնավորման ինստիտուտի հստակեցման և բարելավման անհրաժեշտության վերաբերյալ: Նշվում է այս ինստիտուտի ոչ լիարժեք իրավական կարգավորումների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում կլոնավորման ինստիտուտի իրավական կարգավորման վերաբերյալ առանձին օրենքի բացակայության, վերարտադրողական կլոնավորման արգելքի վերաբերյալ միջազգային օրենսդրական կարգավորման, ինչպես նաև թերապևտիկ կլոնավորման զարգացման հեռանկարներն ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր. կլոնավորում, թերապևտիկ կլոնավորում, վերարտադրողական կլոնավորում, բջիջ, օրգան, հյուսվածք, գենետիկա:

Ներածություն

Թեմայի **արդիականությունը** կայանում է նրանում, որ XXI դարում, որը համարվում է տեխնոլոգիայի դարաշրջան, անհրաժեշտություն է առաջանում զարգացող տեխնոլոգիայի հետ համընթաց կարգավորել նաև առողջապահական ոլորտում առկա խնդրները, որոնք մասնավորապես կապված են կլոնավորման ինստիտուտի հետ: Կարգավորումը պետք է կատարվի միջազգային և ներպետական օրենսդրական մակարդակով և պարունակի արդյունավետ ու կատարյալ իրավական նորմեր: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրությունը համալրվեց բիոէթիկային և բիոբժշկությանը վերաբերող իրավական նորմով: ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը: Նման իրավական նորմի՝ ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրումը պայմանավորեց Հայաստանի Հանրապետությունում բիոէթիկային առնչվող հիմնախնդիրների հանգամանակից ուսումնասիրության անհրաժեշտությունը: 2018 թվականի մարտի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է՝ 125.1, 127.1-ին և 127.2-րդ հոդվածներով: Մասնավորապես 125.1 հոդվածը վերաբերում է մարդու օրգանների (և) կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությանը, 127.1 հոդվածը՝ եվգենիական փորձերի իրականացմանը, իսկ 127.2-ը՝ մարդու վերարտադրողական կլոնավորմանը: Անհրաժեշտ է շեշտել, որ Հայաստանի Հանրապետությունում չկա որևէ գիտական ուսումնասիրություն կլոնավորման հարցադրումների առնչությամբ:

Սույն հոդվածում ոլորտը կարգավորող առկա օրենսդրության վերլուծության ճանապարհով կներկայացնենք այն բացերը, որոնք խոչընդոտում են կլոնավորման ինստիտուտի լիարժեք կիրառման և կարգավորման գործընթացին:

Մեթոդ

Ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք համեմատական, համակարգային վերլուծության և իրավաբանական վերլուծության մեթոդները:

Արդյունքներ և վերլուծություն

«Կլոն» բառը հունական ծագում ունի և նշանակում է ձյուղ (κλών – ձյուղ, շառավիղ): Կլոնը բջիջների կամ անհատների ամբողջություն է, որոնք առաջացել են ընդհանուր նախնիից: Կլոնի առաջացման (**կլոնավորման**) հիմքում ընկած է միտոզը (բակտերիաների համար՝ բջիջների պարզ

բաժանումը), որի դեպքում գենետիկական ինֆորմացիան հավասարապես բաշխվում է մայրական և դուստր բջիջների միջև: Ուստի համարվում է, որ կլոնը բաղկացած է գենետիկորեն համասեռ բջիջներից: Բայց այդ, համասեռությունը հարաբերական է և կարող է խախտվել ինքնաբեր մուտացիաների հետևանքով: Բջիջների կլոնավորումը կիրառվում է փորձարար կենսաբանության և բժշկագիտության (ուռուցքաբանության մեջ՝ մարմնական բջիջների գենետիկայում ևս) մի շարք տեսական և կիրառական հիմնախնդիրների ուսումնասիրման համար:

Կլոնավորումը գենետիկորեն միակերպ օրգանիզմներ ստանալու արդյունքն է բնական ճանապարհով կամ անսեռ բազմացման ժամանակ (Лихин, 2006, էջ 216):

Կլոնավորման պատմությունը վկայում է, որ կլոնավորման առաջին փորձերը կատարվել են դեռևս 1960-ականներին, մասնավորապես 1960-ական թթ. անգլ. կենսաբան Դ. Գյորդոնին հաջողվել է այդ ճանապարհով ստանալ գորտերի կլոնավորված սաղմեր, նույնիսկ մի քանի շերտփուկներ:

1981-ին Կ. Իլմենսին և Պ. Հոփեն ստացել են 3 նույնանման մկնիկներ՝ գեների բացարձակ նույնական հավաքակազմով: Սակայն նրանց փորձնական տվյալներն այլ լաբորատորիաներում վերարտադրել չի հաջողվել, որը հիմք է ծառայել կասկածի տակ առնելու այդ տվյալները:

1980-ականների վերջերին ամերիկացի գիտնականներ Ս. Ստիկը և Դ. Ռոբլը ստացան ճագարների, ապա հորթերի աճող սաղմերի կուլտուրա, բայց 64-բջջանի սաղմերից ավելի բարդ բջիջներ ստանալ չհաջողվեց:

Կլոնավորման ճանապարհին առաջին լուրջ հաջողությունը գրանցվել էր 1990-ականների կեսերին՝ անգլիացի կենսաբան Ա. Ուիլմութի ղեկավարությամբ: Նա ոչխարի ձվաբջջի մեջ փոխպատվաստեց ոչ թե սաղմերից անջատված, այլ փորձանոթում (in vitro) տևականորեն աճեցված կուլտուրայի բջջակորիզներ: Այդ եղանակով հաջողվեց ստանալ 2 նույնական գառնուկներ, որոնք ապրեցին մինչև 8 ամիս: Ավելի ուշ կուլտուրա ստացան ոչխարի ոչ թե սաղմնային բջիջներից, այլ հատուն կենդանու կաթնագեղձից, որի ցողունային բջիջները լիովին տոտիպոտենտ են: Այդ ճանապարհով 1997-ին ստացվել էր հայտնի Դոլի գառնուկը, որի բջիջներն ունեին ելակետային կաթնագեղձի բջջի նույն քրոմոսոմային որոշիչները (մարկերները) (Гоголевский, Здановский, 1998, էջ 11):

Կլոնավորում իրականացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն լուրջ գիտական ուսումնասիրություն, այլ նաև անհրաժեշտ բժշկատեխնոլոգիական ձեռքբերումներ: Ավելին՝ հաճախ նշվում է, որ հենց գենային ինժեներիայի զարգացումներն են նպաստում մարդու կլոնավորման հարցերի բարձրաձայնմանը (Алиева, 2010, էջ 389):

Օրինակ՝ ԱՄՆ-ում 1974 թվականին ստեղծվեց մարդու կենսաբժշկական հետազոտության ազգային հանձնաժողով, որի գործունեությանը վերաբերող հարցերը կարգավորվում էին 1974 թվականի Ազգային հետազոտության ակտով: Նպատակը գիտական հետազոտությունների ենթարկվող մարդկանց իրավունքների պաշտպանությունն էր: Հետագայում այդ

ակտն արդեն հայտնի էր Բելմոնտի գեկույց անունով: Հանձնաժողովի գործունեությունն սկսվում էր կլոնավորման, սաղմերի հարցերի ուսումնասիրությունից և ավարտվում բժշկական ցանկացած հետազոտության հարցերով:

Գրականության մեջ նշվում է կլոնավորման 2 տեսակների՝ **վերարտադրողական և թերապևտիկ կլոնավորման** մասին (Ներսեսովա, Խաչատրյան, Մկրտչյան, 2012, էջ 150):

2001 թվականին Մեծ Բրիտանիայում, 2003 թվականին Դանիայում թույլատրվեց բժշկական հետազոտություններում կիրառել կլոնավորված սաղմեր: Դա հիմնականում բացատրվում էր նրանով, որ այդպիսի էմբրիոններն անհրաժեշտ են ցողունային բջիջների ուսումնասիրման համար, ինչը հնարավորություն կտա ստեղծել փոխարինվող բջիջներ շատ հիվանդությունների դեպքում: Կլոնավորման այս տեսակը կարող ենք անվանել **հետազոտական կլոնավորում**, թեպետև այն հարակից է թերապևտիկ կլոնավորմանը (Գևորգյան, 2012, էջ 57):

Որպես կլոնավորման առանձին տեսակ հարկ է անդրադառնալ նաև **գենային կլոնավորմանը**: Վերջինիս ընթացքում հետազոտողները սովորաբար օգտագործում են կլոնավորման մեթոդները՝ պատճենելով այն գենները, որոնք ցանկանում են ուսումնասիրել: Այդ գործընթացը բաղկացած է օրգանիզմից վերցված գենը, որը հաճախ անվանում են «Օտար ԴՆԹ», գենետիկ նյութի՝ վեկտորի վերափոխելուց: Վեկտորների օրինակներ են մանրէները, բջիջները, վիրուսները, պլազմիդները, որոնք իրենցից ներկայացնում են ԴՆԹ-ի փոքր շրջաններ: Գենը ներդնելուց հետո վեկտորը տեղադրվում է լաբորատոր պայմաններում, որը նպաստում է վերջինիս բազմապատկմանը՝ բազմիցս կրկնապատկելով գենը (Cloning Fact Sheet):

Վերարտադրողական կլոնավորման նպատակը գենետիկորեն նույնական սուբյեկտի ստեղծումն է (մարդու վերարտադրումը, բազմանալը), իսկ թերապևտիկ կլոնավորման նպատակը՝ բջիջների, օրգանների, հյուսվածքների, ցողունների ստեղծումը (մարդու առողջության պահպանության նպատակներից ելնելով): Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 127.2-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու վերարտադրողական կլոնավորումը մահացած կամ կենդանի մարդու՝ արհեստական ճանապարհով գենետիկորեն նմանատիպ ստեղծելուն ուղղված ցանկացած գործողություն կատարելն է:

XXI դարում արգելված է վերարտադրողական կլոնավորումը (պատճենահանումը, կրկնօրինակի ստեղծումը): Մասնավորապես, մարդկային էակի արժանապատվության և մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիային /այսուհետ՝ Օվիեդոյի կոնվենցիա/ կից լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է, որ արգելվում է ստեղծել մարդկային էակ, որը գենետիկորեն նույնական կլինի այլ մարդկային էակի՝ անկախ նմանակված մարդկային էակի կենդանի կամ մահացած լինելու հանգամանքից: Գենետիկորեն նույնական այլ մարդկային էակ ասելով անհրաժեշտ է հասկանալ այն դեպքը, երբ երկու մարդկային էակներ կու-

նենան կորիզային գեների նույն շարքը: Վերարտադրողական կլոնավորման կիրառումը կհանգեցնի բժշկական-բիոլոգիական, կազմակերպչական, տեխնիկական-իրավաբանական, էթիկական-իրավական խնդիրների (Сальников, Старовойтова, 2006, էջ 33):

Բացի այդ, վերարտադրողական կլոնավորման արգելքը մարդկային էակի նույնությունը, եզակիությունը, անկրկնելիությունը պաշտպանելու նպատակ ունի: Երբեմն էլ նշվում է, որ այսօրվա դրությամբ կլոնավորման տեխնոլոգիան կատարյալ չէ, այն կարող է հանգեցնել մարդկային պտղի անժամանակ մահվան (Դավթյան, 2009, էջ 96):

Գրականության մեջ նշվում է նաև, որ վերարտադրողական կլոնավորումը կլինի եվգենիկական առաջխաղացման սկիզբ (Черносви́стов, 2000, էջ 52):

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 127.1 հոդվածի համաձայն եվգենիկական փորձերը՝ մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողություն կատարելն է:

Իրավաբանական գրականության մեջ մարդու վերարտադրողական կլոնավորման հարցին անդրադառնալիս նշվում է, որ անընդունելի է մարդու ընտրություն կատարել գենետիկական բնութագրիչների հիման վրա, քանզի կլոնավորված էակի ռիսկի վերաբերյալ գիտելիքներ առկա չեն, առկա է կլոնավորված երեխաների, մարդկանց ապագայի անորոշություն, կլոնավորված էակի և չկլոնավորված էակի միջև իրավաբանական խնդիրներ կառաջանան, մարդու արժանապատվության և ինքնատիպության հարցերի կրախվեք (Иорьши, 2003, էջեր 235-254):

Թերապևտիկ (բուժական) կլոնավորումը կլոնավորման տեխնոլոգիա է սաղմնային, ցողունային բջիջների արտադրության, գիտական հետազոտությունների, ինչպես նաև մարդկային տարբեր հիվանդությունների բուժման մեջ օգտագործելու համար: Այս ցողունային բջիջները կարող են օգտագործվել փորձարկումների մեջ, որոնք ուղղված են տարբեր հիվանդություններ ուսումնասիրելուն և համապատասխան բուժման մեթոդներ վերհանելուն: **Թերապևտիկ (բուժական) կլոնավորումը, մարդու առողջության պահպանության նպատակներից ելնելով, բջիջների, օրգանների, հյուսվածքների, ցողունների ստեղծումն է:**

Ենթադրվում է, որ սաղմի զարգացումը դադարում է 14-օրվա ընթացքում, քանի որ գիտնականների մեծամասնությունը կարծում է, որ այդ ժամանակահատվածից հետո կենտրոնական նյարդային համակարգը սկսում է զարգանալ սաղմնային բջիջներում, և բջիջների կոնգլումերատը (սաղմը) արդեն պետք է համարել կենդանի մարմին:

Թերապևտիկ կլոնավորման ժամանակ սաղմը չի տեղադրվում կնոջ արգանդում՝ հետագա զարգացման համար, այլ օգտագործվում է որպես գիտական հետազոտությունների և փորձարկումների առարկա՝ ցողունային բջիջներ ստանալու համար: Սաղմնային, ցողունային բջիջներով ամենահարուստ աղբյուրը բջջի բաժանվելուց հետո 5-օրվա ընթացքում ձևավորված հյուսվածքն է, այդ փուլը կոչվում է բլաստոթիդային շրջան: Սաղմը

բաղկացած է 100 բջիջների խմբից, որը կարող է դառնալ ցանկացած տեսակի բջիջ: Յոդունային բջիջները գոյանում են կլոնավորված սաղմերից և ավարտվում սաղմի ոչնչացմամբ՝ մինչ այդ դեռ գտնվելով փորձարկման խողովակի մեջ: Հետազոտողները հույս ունեն աճեցնել սաղմնային ցողունային բջիջներ, որոնք էլ իրենց հերթին եզակի հնարավորություն ունեն վերածվելու գրեթե ցանկացած տիպի բջիջների, որն էլ հնարավորություն կընձեռի լաբորատոր պայմաններում աճեցնել առողջ հյուսվածքներ, որպեսզի հետագայում փոխարինեն վնասված հյուսվածքները:

Ուսումնասիրելով կլոնավորված սաղմերից ստացված կենդանական բջիջների մասնիկները, հնարավոր է հիվանդության մոլեկուլային պատճառների մասին իմանալ ավելին: Այլ կերպ ասած՝ բլաստոցիստների փուլում ձևավորվում են բազմաթիվ բջիջներ (վերջիններս կարող են տարբերվել այլ բջիջներից, բացառությամբ արտամարմնային), որոնցից հետագայում ձևավորվում են մարմնի բոլոր օրգանները և հյուսվածքները: Թերապևտիկ կլոնավորման նպատակն է օգտագործել այն կամ պարթեոգենեզի վրա հիմնված բջջային թերապիան՝ հիվանդ մարդկանց օգնելու համար: Ներկայումս ջանքերը կենտրոնացված են նյարդային և սրտանոթային համակարգերի հիվանդությունների, աուտոիմունային խանգարումների, շաքարախտի, արյան և ոսկրածուծի հիվանդությունների բուժման վրա: Երբ նյարդային բջիջները հնարավոր կլինի աճեցնել կլոնավորված սաղմերից, հավանաբար հնարավոր կլինի բուժել ոչ միայն ողնաշարի վնասվածք, այլ նաև գլխուղեղի խանգարումները, ինչպիսիք են Պարկինսոնի, Ալցհեյմերը, կաթվածը և էպիլեպսիան: Բացի այդ, ցողունային բջիջները կարող են վերածվել նաև ենթաստամոքսային գեղձի բջիջների՝ շաքարախտի, սրտի մկանների նոպաների բուժման համար:

Վերոգրյալից ակնհայտ է, որ ցողունային բջիջների ուսումնասիրությունն, այսինքն թերապևտիկ կլոնավորումն, արժանի է առավելագույն ուշադրության, քանի որ վերջինս կարող է խթանել մարդկության բազմաթիվ հիվանդությունների բուժումը:

Տարբեր է, անգամ հակասական՝ աշխարհում տարբեր երկրների մոտեցումը կլոնավորման վերաբերյալ: Որոշ երկրներում կլոնավորման ցանկացած տեսակ ժամանակավոր կամ անժամկետ օրենդրական մակարդակով արգելված է (Ֆրանսիա, Հունաստան, Գերմանիա, Ավստրալիա, Շվեյցարիա, Էկվադոր, Իտալիա), որոշ երկրներում թույլատրված է միայն թերապևտիկ կլոնավորումը (Մեծ Բրիտանիա, Մինգապուր, Բելգիա, Իսրայել) (World Human Cloning Policies):

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել, սակայն դեռևս չի վավերացրել Օվիեդոյի կոնվենցիան: Չնայած այն հանգամանքին, որ ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ և Քրեական օրենսգրքի 127.1 հոդվածներով արգելվում է վերարտադրողական կլոնավորումը, ամեն դեպքում անհրաժեշտություն է առաջանում կարգավորելու այս հարցը միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ բոլոր օրենսդրական սահմանափակումներն ուղղված են միայն վերարտադրողական կլոնավորմանը, այնինչ որևէ կարգավորում կամ արգելք սահմանված չէ թերապևտիկ կլոնավորման վերաբերյալ:

Կարծում ենք, որ պետք է նպաստել թերապևտիկ (բուժական) կլոնավորման առաջընթացին, որի **նպատակը մարդկային կյանքը փրկելն է**: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է փաստել, որ Օվիեդոյի կոնվենցիան չի արգելում հյուսվածքների, բջիջների կլոնավորումը, պատճենումը բժշկության մեջ օգտագործելու նպատակով, ինչպես նաև հետազոտության, գիտական փորձերի, թերապիայի համար՝ որպես կլոնավորման օբյեկտ դիտարկելով կենդանիներին:

Եզրակացություն

Ամփոփելով կլոնավորման հարցի ուսումնասիրությունը, մենք եկել ենք այն եզրահանգմանը, որ այսօր ՀՀ-ում բացակայում է առանձին օրենք կլոնավորման մասին, որն ուղղված կլինի թերապևտիկ կլոնավորման կիրառման հիմնախնդիրների կարգավորմանը:

Պետք է փաստել, որ կլոնավորման վերաբերյալ առանձին օրենքի ընդունումը կնպաստի մի շարք անորոշությունների վերացմանը, մասնավորապես՝ հստակ կսահմանի կլոնավորման հասկացությունը, տեսակները, նպատակը, կիրառման կարգը և արգելքները:

ՀՀ ներպետական օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում արգելված է միայն վերարտադրողական կլոնավորումը, այն ունի հստակ ամրագրում, հստակ հիմնավորումներ, որոնց հետ համամիտ ենք: Ինչ վերաբերում է թերապևտիկ կլոնավորմանը (ցողունային բջիջների, օրգանների ստացման նպատակով), ապա այն խրախուսելի է, քանզի այսօր աշխարհը փոխպատվաստման ժամանակ դոնորական նյութի (օրգան, հյուսվածք) առեղծված ունի, ինչը առաջարկի սակավության հետևանքով անդառնալի կորուստներ է ստեղծում: Թերապևտիկ (բուժական) կլոնավորումը պետք է խրախուսվի, վերջինիս համար անհրաժեշտ իրավական, տեխնիկական, տեխնոլոգիական պայմաններ պետք է ստեղծվեն, անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ ամրագրել և կարգավորել թերապևտիկ կլոնավորման վերաբերյալ դրույթներ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել այդ հարցի գիտահետազոտական ուսումնասիրությանը:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք ընդունել օրենք «Կլոնավորման մասին», որը ձեռնամուխ կլինի թերապևտիկ կլոնավորման կիրառման հիմնախնդիրների կարգավորմանը, վավերացնել Օվիեդոյի կոնվենցիան, արդյունքում միանգամից կարգավորելով կլոնավորման հիմնախնդիրները և ներպետական և միջազգային օրենսդրությամբ, ինչպես նաև գիտակցելով թերապևտիկ կլոնավորման պահանջը և դրական կողմերը, ստեղծել համապատասխան իրավական, տեխնիկական և տեխնոլոգիական պայմաններ թերապևտիկ կլոնավորմանը նպաստելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն. Ընդունված 05.12.1995թ.//ՀՀՊՏ 21.12.2015// Հատուկ թողարկում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1>:
- Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունված 18.04.2003թ.:
- Գևորգյան, Ա. (2012): *Գիրության փիլիսոփայություն, դասախոսությունների կուրս*: Երևան:
- Դավթյան, Ս. (2009): *Բիոէթիկա, դասագիրք*: Երևանի պետական բժշկական համալսարան, Երևան:
- Ներսեսովա, Լ., Խաչատրյան, Զ., Մկրտչյան, Ս. (2012): *Կենսաէթիկայի ներածություն*: Երևան:
- Конвенция о защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины*. Принята 04.04.1997г., вступил в силу 1999г. Овьедо.
- Дополнительный протокол о запрете клонирования человека к Конвенции о защите прав человека и достоинства человеческого достоинства в связи с использованием достижений биологии и медицины*. Принят 12.01.1998г., Париж.
- Алиева, М. (2010). *Биоэтические и правовые вопросы клонирования: анализ норм международного права и российского законодательства*. Актуальные проблемы российского права, N 1, Москва.
- Гоголевский, П.А., Здановский, В.М. (1998). *Международное право и клонирование*.
- Йорыш, А. (2003). *Правовые и этические проблемы клонирования человека*. В сборнике: Современное медицинское право в России и за рубежом: Сб. науч. тр., Центр адм. – правовых исслед.; отв. ред.: Дубовик О., Пивоваров Ю., Москва.
- Лихин, А.Ф. (2006). *Концепции современного естествознания*. Москва, «Проспект».
- Сальников, В., Старовойтова, О. (2006). *Клонирование человека как правовая категория*. Вестник Санкт–Петербургского университета МВД России N 1 (29), Санкт–Петербург.
- Черносвистов, Е. (2000). *Социальная медицина*. Москва.
- World Human Cloning Policies* [Էլեկտրոնային աղբյուր] // URL: <http://www.ruf.rice.edu/~neal/stemcell/World.pdf> (մուտք՝ 23.01.19)
- Cloning Fact Sheet*, published by National Human Genome Research Institute [Էլեկտրոնային աղբյուր] // URL: <https://www.genome.gov/about-genomics/fact-sheets/Cloning-Fact-Sheet>

References

- Hayastani Hanrapetutyun Sahmanadrutyun*, [Constitution of the Republic of Armenia] 21.12.2015 (in Arm.)
- Hayastani Hanrapetutyun qreakan orensgrirq* [Criminal Code of the Republic of Armenia] Yndunvac 18.04.2003t. (In Arm.)

- Gevorgyan, A. (2012). *Gitutyanyan philisopayutyun, dasaxosutyunneri kurs* [Philosophy of science, lecture course] Erevan. (In Arm.)
- Davtyan, S. (2009). *Bioetik, dasagirq* [Bioethics, textbook]. Erevani petakan bjskakan hamalsaran. Erevan, (In Arm.)
- Nersesova, L., Xachatryan, Z., Mkrtchyan, S., (2012). *Kensaetikayi neracutyun* [Introduction to Bioethics]. Erevan, (In Arm.)
- Konventsiya o zashchite prav i dostoinstva cheloveka v svyazi s primeneniem dostizheniy biologii i meditsiny* [Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being with regard to the Application of Biology and Medicine]. Prinyata 04.04.1997g., vstupil v silu 1999g. Oviyedo (In Rus.)
- Dopolnitelnyy protokol o zaprete klonirovaniya cheloveka k Konventsii o zashchite prav cheloveka i dostoinstva chelovecheskogo dostoinstva v svyazi s ispol'zovaniem dostizheniy biologii i meditsiny* [Additional Protocol on the Prohibition of Human Cloning to the Convention for the Protection of Human Rights and the Dignity of Human Dignity with regard to the Use of Biology and Medicine]. Prinyat 12.01.1998g. Parizh. (In Rus.)
- Alieva, M. (2010). *Bioeticheskie i pravovye voprosy klonirovaniya: analiz norm mezhdunarodnogo prava i rossiyskogo zakonodatel'stva, Aktualnie problemi rossiyskogo prava* [Bioethical and legal issues of cloning: analysis of international law and Russian legislation, Actual problems of Russian law]. N 1, Moskva, (In Rus.)
- Gogolevskiy, P.A. Zdanovskiy V.M, (1998). *Mezhdunarodnoe pravo i klonirovanie* [International law and cloning]. (In Rus.)
- Yorysh, A. (2003). *Pravovye i eticheskie problemy klonirovaniya cheloveka* [Legal and ethical issues of human cloning]. V sbornike: Sovremennoe meditsinskoe pravo v Rossii i za rubezhom: Sb. nauch. tr., Tsentr adm.-pravovyykh issled.; Otv. red.: Dubovik O., Pivovarov Yu., Moskva. (In Rus.)
- Likhin, A.F. (2006). *Kontseptsii sovremennogo estestvoznaniya* [Concepts of modern natural science]. Moskva «Prospekt», st. 216. (In Rus.)
- Salnikov, V.P., Starovoytova, O.E. *Klonirovanie cheloveka kak pravovaya kategoriya* [Human cloning as a legal category]. (In Rus.)
- Chernosvistov, E. *Sotsialnaya meditsina* [Social medicine]. Moskva, 2000. (In Rus.)
- World Human Cloning Policies* [Electronic resource] // URL: <http://www.ruf.rice.edu/~neal/stemcell/World.pdf> (accessed: 23.01.19)) (In Eng.)
- Cloning Fact Sheet*, published by National Human Genome Research Institute [Electronic resource]//URL: <https://www.genome.gov/about-genomics/fact-sheets/Cloning-Fact-Sheet> (In Eng.)

Каро Хачманян

*Магистрант факультета Юриспруденция Российско–Армянского
университета,
Юрист адвокатской конторы “Консиглери”,
Эл. адрес: khachmanyanyan@bk.ru*

ОБ ОСНОВНЫХ ПРАВОВЫХ ПРОБЛЕМАХ ПРИМЕНЕНИЯ ТЕРАПЕВТИЧЕСКОГО (МЕДИЦИНСКОГО) КЛОНИРОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Статья посвящена проблемным вопросам использования терапевтического (медицинского) клонирования. Анализируется концепция клонирования, виды, цели, перспективы применения терапевтического клонирования, а также анализируются существующие проблемы в данной области, выдвигаются предложения по уточнению и совершенствованию последнего. На основе анализа делаются выводы о необходимости уточнения и совершенствования института клонирования для внесения некоторых законодательных изменений и дополнений. Отмечаются неполные правовые регуляторы этого института, в частности, отсутствие отдельного закона о правовом регулировании института клонирования в Республике Армения, отмечается необходимость изучения международно-правового регулирования запретов репродуктивного клонирования, а также перспективы терапевтического развития.

Ключевые слова: клонирование, терапевтическое клонирование, репродуктивное клонирование, клетка, орган, ткань, генетика.

Karo Khachmanyanyan

*Master's student in the Faculty of Law at Russian–Armenian University,
Lawyer at Law Office “Consigliere”,
Email: khachmanyanyan@bk.ru*

THE PROBLEMATIC LEGAL ISSUES OF THERAPEUTIC (MEDICAL) CLONING IN THE REPUBLIC OF ARMENIA

The article is focusing on the problematic legal issues of therapeutic (medical) cloning. The paper analyzes the definition, types, purpose of the cloning, prospects for the use of therapeutic cloning; the paper also highlights the problems in this field and proposes suggestions to clarify them. Based on the analysis, it also provides conclusions regarding the legislative amendments and addendums related to the clarification and improvement of the cloning institute. The paper refers to the incomplete legal regulation of this institute, in particular the absence of special law of the Republic of Armenia on legal regulation of the cloning, the necessity to study the prospects for the regulation of international

legislation on the prohibition of reproductive cloning and the development of therapeutic cloning.

Key Words: cloning, therapeutic cloning, reproductive cloning, cell, organ, tissue, genetics.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. մայիսի 2-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. մայիսի 3-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. օգոստոսի 8-ին: